ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/3

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Համայակ Ադամյանը, Գագիկ Ասրյանը, Զվարդ Ծատուրյանը, Սամվել Մակարյանը, Աննա Մանուչարյանը, Անահիտ Մեժլումյանը, Ժիրայր Միրզոյանը, Էմանույել Ուզունյանը, Արմինե Պապյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Միեր Պապյան, Մարտին Ապրեսյան, Վաղարշակ Գրիգորյան, Արթուր Թումանյան, Աննա Նավասարդյան, Մելինե Պապյան, Ալինա Ալավերդյան, Գեղեցիկ Քալանթարյան

Նիստը վարում էր Բերդ համայնքի ղեկավար՝ Աստղիկ Հակոբյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Մարտին Ապրեսյանը

Լսեցին
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով Բերդ համայնքի ավագանու 8/ութ/ անդամների առաջարկությունը, Բերդ **համայնքի ավագանին որոշում է՝**

.Հաստատել Բերդ համայնքի ավագանու արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1)ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա. Հակոբյան/

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 416-Ա/

Լսեցին
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով և հաշվի առնելով Բերդ համայնքի ավագանու 8/ութ/ անդամների առաջարկությունը, **Բերդ համայնքի ավագանին որոշում է՝**

1. Դադարեցնել 2019 թ. նոյեմբերի 9-ին կնքված՝ Տավուշի նոտարական տարածքի նոտարական գրանցամատյանում 1707 համարի տակ գրանցված անհատույց օգտագործման պայմանագիրը:

2. Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող Այգեձոր գյուղի 1 փողոց,1 գրադարան հասցեում գտնվող շենքից 78,45քմ ընդհանուր մակերեսով, երկրորդ հարկի թիվ 11 սենյակը՝ 56.80ք.մ., թիվ 9 սենյակից 21,65 ք.մ, առանց մրցույթի, վարձակալությամբ տրամադրել Արթուր Սարգսի Սաֆարյանին՝ բժշկական և ատամնատեխնիկական գործունեություն իրականացնելու նպատակով:

3. Վարձավճարի չափ սահմանել՝ 7845 դրամ / 1ք.մ՝ 100 դրամ/

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 3 /երեք/ ամսվա ընթացքում բժշկական ծառայություններ չմատուցելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 417-Ա/

Ավագանու անդամներ
ՆԵԼԼԻ ԱԼԻԽԱՆՅԱՆ
ԱՆՆԱ ԱՎԱԼՅԱՆ
ՍԵՎԱԿ ԲԱԴԱԼՅԱՆ
ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՐՅԱՆ

ԱՐԱՐԱՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐԱՄ ՆԻԳՈՅԱՆ

ԱՐՏԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՍԱՖԱՐՅԱՆ

ՎԱՀՐԱՄ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Բերդ համայնքի ղեկավար

ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Մարտին Ապրեսյանը